

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսատնտեսագիտական վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանոնադրական խնդիրներից բխող, մասնավորապես «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 30-ի թիվ 27-Ն հրամանով հաստատված՝ հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների փաթեթի կազմման անհրաժեշտությամբ, և վարչության գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ:

Վարչության աշխատանքային ռեսուրսներն ամբողջությամբ ներգրավված են հետևյալ աշխատանքներում.

- Տարեկան բյուջետային հայտի կազմում,
- Վարչության գործառույթներին առընչվող իրավական ակտերի նախագծերի կազմում,
- Միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման աշխատանքների իրականացում
- Տարեկան բյուջեի բացատրագիր-հաշվետվության կազմում,
- «Հայկական ծրագրեր» համակարգի հաշվապահական հաշվառման վարում,
- ՀՀ ֆինանսների նախարարության «Բլիենթ-Թրեժրի» հաշիվները սպասարկելու էլեկտրոնային կառավարման ծրագրային համակարգի միջոցով կոմիտեի պայմանագրերի մուտքագրում, փոփոխում, փոխանցում, ամփոփում,
- Քաղաքացիների գումարների վերադարձների փաստաթղթերի կազմում և իրականացում,
- Ֆինանսական հոսքերի օրական, ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կազմում և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացում,
- Ստորաբաժանումներին ֆինանսավորման տրամադրում,
- Կոմիտեի աշխատակիցների, աշխատավարձերի, արձակուրդային վճարների, անաշխատունակության նպաստների հաշվարկ,

- Կոմիտեի մարզային և սպասարկման գրասենյակների, Կոմիտեի կենտրոնական ապարատի կառուցվածքային ստորաբաժանումների նյութական պատասխանատուների փոփոխության ժամանակ գույքագրման աշխատանքների կազմակերպում,
- Համակարգի ամենամսյա խրախուսման գումարների հավաքագրում, ամփոփում և հրամանի նախագծի կազմում,
- Կոմիտեի մարզային ստորաբաժանումների կողմից ներկայացվող պետական տուրքերի հավաքագրում, ամփոփում և հաշվետվության ներկայացում ՀՀ պետական եկամուտների կոմիտե:
- Կոմիտեի աշխատակիցների սոցիալական փաթեթների հետ կապված աշխատանքների կազմակերպում (հաշիվների բացման, դիմումների և պայմանագրերի հավաքագրման, փոխանցվող գումարների հաշվարկման, նոր ընդունվող աշխատակիցների մուտքագրման, բազաների թարմացման, ազատված աշխատակիցների պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների հիման վրա ստանձնած պարտավորությունների չափի հաշվարկման և համամասնորեն մարման կազմակերպում, ամենամսյա, եռամսյակային, կիսամյակային հաշվետվությունների կազմում և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացում, ցանկացած փոփոխության դեպքում ՀՀ առողջապահության նախարարություն տվյալների ներկայացում),
- Կոմիտեի մարզային ստորաբաժանումների կողմից ներկայացվող պետական տուրքերի հավաքագրում, ամփոփում և հաշվետվության ներկայացում ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

Այդ պատճառով առաջարկվում է Վարչության աշխատանքներում ներգրավել համապատասխան փորձ ունեցող մասնագետ, ով կկարողանա «Հայկական ծրագրեր» համակարգում ստեղծված նոր միասնական պահոց տեղափոխել բոլոր պահոցների հաշվապահական հաշվառման տվյալները, զուգահեռաբար մուտքագրել փոփոխությունները և հաշվապահներին տրամադրել միասնական մեթոդական ցուցումներ՝ «Հայկական ծրագրեր» համակարգի միասնական պահոցում միանման աշխատելու համար, մարզային ստորաբաժանումների հաշվապահների հաստիքների կրճատմաբ պայմանավորված կկարողանա միավորել մարզային ստորաբաժանման հաշվիվները և տվյալների բազան կոմիտեի տվյալների բազային:

## 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Կադաստրի կոմիտեի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանվող իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան միասնական ֆինանսական հաշվետվությունների փաթեթի կազմման նպատակով «Հայկական ծրագրեր» համակարգում տվյալների մուտքագրման միասնական մեթոդաբանության կազմում, ինչպես նաև հաշվապահներ չունեցող մարզային ստորաբաժանումների հաշվապահական հաշվառման բազաների միացում կենտրոնական ապարատի հաշվապահական հաշվառման բազին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ



Պայմանագիրը կնքելու պահից սկսած մեկ տարի ժամկետով:

#### 4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի ներգրավմամբ ակնկալվում է.

Միասնական ֆինանսական հաշվետվությունների կազմման վերաբերյալ լիազոր մարմնի կողմից ներկայացվող տեղեկատուների ուսումնասիրություն և վերլուծություն,

- «Հայկական ծրագրեր» համակարգում նոր միասնական պահոցի վարում,
- Կոմիտեի և տարածքային ստորաբաժանումների պահոցների հաշվապահական հաշվառման տվյալների տեղափոխում,
- Միասնական ֆինանսական հաշվետվությունների փաթեթի կազմում,
- Միասնական ֆինանսական հաշվետվությունների փաթեթի կազմման մեթոդաբանության մշակում:

#### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը:

#### 5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքների գնահատման չափանիշներն են.

- Միասնական ֆինանսական հաշվետվությունների փաթեթի կազմման մեթոդաբանության մշակում,
- Բազաների միավորում,
- հաշվետվությունների մշակում:

#### 6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- ՀՀ քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- իր լիազորություններին վերաբերող անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն,
- թիմային աշխատանքի ունակություն,
- հաշվետվությունների, փաստաթղթերի կազմման և ներկայացման ունակություն,
- տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,

- բանակցություններ վարելու կարողություն,
- կոնֆլիկտների կառավարում,
- փոփոխությունների կառավարում,
- ժամանակի կառավարում:

## 7. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Փորձագետը Կոմիտեին տրամադրվող փորձագիտական ծառայությունների շրջանակում պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

*«Հայկական ծրագրեր» համակարգում գործող օրենսդրությանը համապատասխան միասնական պահոցի վարում*

- Կոմիտեի հաշվապահական հաշվառման տվյալների տեղափոխում նոր միասնական պահոց,
- Սպասարկման գրասենյակի աշխատակիցների տվյալների, հաշվարկների տեղափոխում և ընթացիկ հաշվարկների գուգահեռ իրականացում
- Մարզային ստորաբաժանումների հաշվապահական տվյալների՝ հիմնական միջոցների, արագամաշ առարկաների, նյութերի տեղափոխում նոր ստեղծված պահոց և ընթացիկ փոփոխությունների վարում:
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման հաշվապահական տվյալների տեղափոխում նոր միասնական պահոց:
- Ամենամսյա տվյալների համեմատում նոր և գործող պահոցների տվյալների հետ:

*Մեթոդաբանության մշակում*

- Սահմանել հիմնական միջոցների տեղափոխման ժամանակ գույքային համարների կազմման համար միասնական մոտեցում, որը հնարավորություն կտա ապահովել կապը հին և նոր գույքային տվյալների մեջ:
- Սահմանել միասնական մոտեցում գործող և նոր պահոցներում աշխատավարձերի, անաշխատունակության նպասների, խրախուսումների տվյալների մուտքագրման համար: